Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 217 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՏՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	1) ստեղծել կայուն և որակյալ տնային խնամքի համակարգ Հայաստանում, որի միջոցով սոցիալապես խոցելի տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք և միայնակ մարդիկ կստանան անհրաժեշտ խնամք, առողջապահական և սոցիալական աջակցություն. 2) բարելավել շահառուների կյանքի որակը՝ ապահովելով անհրաժեշտ խնամքի և աջակցության հասանելիություն. 3) կրթել խնամքի ոլորտի մասնագետներին. 4) խթանել պետական և մասնավոր հատվածների համագործակցությունը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	1) Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ ի դեմս Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (հասցե՝ Գերմանիա, քաղ. Բեռլին 10963, Ստրեսեմանշտրասե 94). 2) «Կարիտաս Գերմանիա» բարեգործական կազմակերպություն (հասցե՝ Գերմանիա, քաղ. Ֆրայբուրգ, Կարլշտրասե 40):
4.	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն (հասցե՝ քաղ. Գյումրի, Հ. Սարգսյան փողոց, 3-րդ նրբանցք, տուն 8, ՀՎՀՀ՝ 05514397)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	1) իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղ. Գյումրի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, քաղ. Վանաձոր. 2) բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	855,000 եվրոյին համարժեք դրամ
7.	Բարեգործություն ստացողը	1) 600 շահառու (քաղաք Գյումրիում 300 շահառու և քաղաք Վանաձորում 300 շահառու)՝ սոցիալապես խոցելի, միայնակ և առողջական խնդիրներ ունեցող տարեցները և 18 տարեկան և բարձր հաշմանդամություն ունեցող անձինք

		2) քաղաք Գյումրիում և քաղաք Վանաձորում երկու համայնքային աջակցության ակումբ՝ նախատեսված տարեցների սոցիալականացման և փոխօգնության համար. 3) 120 ուսանող՝ քաղաք Գյումրիում և քաղաք Վանաձորում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից, որոնք կստանան տնային խնամքի վերաբերյալ ուսուցում. 4) քաղաք Գյումրիում և քաղաք Վանաձորում բնակվող 40 տնային խնամքի աշխատակից և կամավոր, որոնք կաշխատեն շահառուների հետ՝ ստանալով համապատասխան վերապատրաստում և կրթություն. 5) քաղաք Գյումրիում և քաղաք Վանաձորում բնակվող 120 ոչ ֆորմալ խնամակալ (ընտանիքի անդամներ, հարևաններ, ընկերներ), որոնք կստանան անհրաժեշտ վերապատրաստումներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի ապրիլի 4-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) ծրագրում ընդգրկված անձնակազմի և շահագրգիռ կողմերի (միջին մասնագիտական կրթական հաստատությունների, պետական խնամքի հաստատությունների, խնամքի այլ մատակարարների և խնամքի կենտրոնների անձնակազմերի) կարողությունների զարգացում՝ դասընթացների, սեմինար-վարժանքների, քննարկումների և փորձի փոխանակման միջոցով - 236,381 եվրոյին համարժեք դրամ. 2) գերոնտոլոգիայի և ծերաբուժության ոլորտում վերապատրաստման մոդուլների մշակում, փորձարկում և գնահատում երկու մասնագիտական բուժքույրական քոլեջներում: Տնային խնամքի ծառայությունների մոնիթորինգի և գնահատման մեխանիզմի մշակում և փորձարկում, հետազոտական աշխատանքների իրականացում, դրանց հիման վրա կլոր-սեղան քննարկումների և համագումարների կազմակերպում: Տարեցների հարցերով զբաղվող և նրանց ծառայություններ մատուցող կազմակերպությունների ցանցի բարելավում, քաղաքային մակարդակով ոչ պաշտոնական աջակցության ցանցերի մշակում և փորձարկում (այսպես կոչված՝ «Համայնքային համերաշխության ակումբներ») - 288,096 եվրոյին համարժեք դրամ. 3) խնամք իրականացնող հաստատությունների անձնակազմի տարածաշրջանային և արտասահմանյան հանդիպումների, փոխանակման այցերի և համաժողովների կազմակերպում - 54,762 եվրոյին համարժեք դրամ. 4) իրազեկման բարձրացմանն ուղղված նյութերի պատրաստում և տարածում՝ ձեռնարկների, բուկլետների և պաստառների տպագրություն, մեդիա արշավների կազմակերպում, ուսումնական նյութերի պատրաստում, դիտակտիկ նյութերի ձեռքբերում (մանեկեններ, մուլյաժներ և այլ ուսումնական սարքավորումներ) – 11,905 եվրոյին համարժեք դրամ. 5) ծրագրի գործողությունների որակի գնահատում, ինչպես նաև սոցիալական աշխատողների, բուժքույրերի, սոցիալական խնամողների և խնամքի կենտրոնների անձնակազմի վերապատրաստման արդյունքում ստացած գիտելիքների և հմտությունների գնահատում - 35,714 եվրոյին համարժեք դրամ.

		6) շահառուների (քաղաք Գյումրիում 300 շահառու և քաղաք Վանաձորում 300 շահառու՝ սոցիալապես խոցելի, միայնակ և առողջական խնդիրներ ունեցող տարեցները և 18 տարեկան և բարձր հաշմանդամություն ունեցող անձինք) տնային պայմաններում ծառայությունների, դեղորայքի, հիգիենիկ պարագաների տրամադրում տնայցերի միջոցով – 57,142 եվրոյին համարժեք դրամ. 7) կազմակերպական ծախսեր – 171,000 եվրոյին համարժեք դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) հիգիենիկ պարագաների, առաջին օգնության դեղորայքի ձեռքբերում – 57,142 եվրոյին համարժեք դրամ. 2) համայնքներում այցելություններ, միջոցառումներ և վերապատաստումներ կատարելու և շահառուներին աջակցելու նպատակով 1 մարդատար տրանսպորտային միջոցի ձեռքբերում /1 հատ/-40,476 եվրոյին համարժեք դրամ, ինչպես նաև շահագործվող ավտոմեքենայի վառելանյութի, պահեստամասերի ձեռքբերում – 30,475 եվրոյին համարժեք դրամ. 3) ուսումնական նյութերի պատրաստում, դիտակտիկ նյութերի ձեռքբերում (մանեկեներ, մուլյաժներ և այլ ուսումնական սարքավորումներ)՝ 23,810 եվրոյին համարժեք դրամ. 4) իրազեկման բարձրացմանն ուղղված նյութերի տպագրություն /ձեռնարկներ, բուկլետներ և պաստառներ/, մեդիա արշավների կազմակերպում – 11,905 եվրոյին համարժեք դրամ. 5) ծրագրի գործողությունների որակի բարելավում բուժքույրերի, սոցիալական աշխատողների, սոցիալական խնամողների, ուսանողների, համայնքային համերաշխության ակումբի անդամների և ոչ ֆորմալ խնամակալների համար ստացած գիտելիքների և հմտությունների գնահատում արտաքին մասնագետների կողմից – 5,952 եվրոյին համարժեք դրամ. 6) կոմունալ ծախսեր, գրասենյակային պարագաների ձեռքբերում և այլ գրասենյակային ծախսեր – 13,942 եվրոյին համարժեք դրամ. 7) քաղաք Գյումրիում և քաղաք Վանաձորում խնամքի կենտրոնների տեխնիկական վերազինում՝ համակարգիչների, տպիչների, տեսացրիչների և այլ ապրանքների ձեռքբերում – 5,952 եվրոյին համարժեք դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) աշխատավարձ – 157,058 եվրոյին համարժեք դրամ. 2) կոմունալ ծախսեր, գրասենյակային պարագաների ձեռքբերում և այլ գրասենյակային ծախսեր – 13,942 եվրոյին համարժեք դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Անմիջական համագործակցություն կիրականացվի Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարության, Առողջապահության նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի և Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնի հետ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի և Գյումրու համայնքապետարանի հետ, Լոռու մարզպետի աշխատակազմի և Վանաձորի համայնքապետարանի հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին. 2) ծրագրի իրականացման վերահսկողությունը կրելու է պարբերական բնույթ և կատարվելու է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության, «Կարիտաս Գերմանիա» կազմակերպության և «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության վարչական խորհրդի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ